ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐՈՒՄ

Սարգսյան Ա.Ա. (Երևանի պետական համալսարան ԻՄ, Իջևան, Հայաստան)
asya. sargsyan.1966@mail.ru
Ներկայացման ամս.՝ 13.08.2019
գրախոսման ամս.՝ 14.08.2019
տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Հոդվածում դիտարկված է համամարդկային և ազգային արժեքների հարաբերակցությունը սոցիալական տարբեր ինստիտուտներում: Հիմնավորված է, որ ցանկացած սոցիալական ինստիտուտի գերակա խնդիրն է ազգային արժեքների պահպանումը, համամարդկային և ազգային արժեքների ներդաշնակումը, հայապահպան և հայակերտման գործընթացների ապահովումը, իսկ դա հնարավոր է, եթե համապատասխան սոցիալական ինստիտուտում ազգային, մշակութային, բարոյական, ինքնության արժեքները փոխանցվում են միջսերնդային համագործակցությամբ:

Հանգուցային բառեր՝ *արժեք, բարոյական արժեք, համամարդկային արժեք, սոցիալական ինստիտուտ, սոցիալական հարաբերություններ, միջսերնդային համագործակցություն:*

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական, բովանդակային բազմաթիվ փոփոխություններն իրենց անմիջական գործունեությունն են ունենում անձի ձևավորման, արժեքային համակարգի փոփոխման, սոցիալականացման վրա: Սոցիալական ինստիտուտները երբեմն դժվարանում են իրականացնել իրենց գործառույթները [1, էջ 8], քանի որ տեղի է ունեցել բարոյամշակութային արժեքների վերաիմաստավորում: Անձի սոցիալականացման տարբեր փուլերի ընթացքում խոր հակասություններ են ստեղծվում համամարդկային և ազգային, հասարակական և անձնային արժեքների միջև [2, էջ 49]: Տարիքային շրջաբաժանմանը զուգընթաց փոփոխվում են բարոյամշակութային արժեքները, որոնք ուղղակիորեն արտահայտվում են անձի աշխարհայացքում, դաստիարակվածության, կրթվածության, զարգացվածության մակարդակում, վարքագծում, հաղորդակցական մոդելներում: Համաշխարհայնացմամբ պայմանավորված հասարակական արժեքների ձևավորման հիմքում ընկած քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ գործոններ երբեմն խոչընդոտում են ուսանողի անձի ներդաշնակ և լիարժեք ձևավորմանը: Ուսանողների շրջանում բարոյամշակութային արժեքների ուսումնասիրությունը փաստում է, որ հիմնախնդրի քննարկումը կարևոր է, արդիական և հրատապ: Բարոյամշակութային արժեքային համակարգի մասին տեղեկատվություն ստանալու և խորությամբ վերլուծելու նպատակով մեր կողմից իրականացվել են սոցիոլոգիական հարցումներ՝ ուսանողների և դասախոսների շրջանում: Առաջարկվել են տարբերակված հարցաթերթիկներ՝ ուսանողների (10 հարցից բաղկացած) և

պրոֆեսորադասախոսական կազմի՝ (5 հարցից) համար: Հարցաթերթերը ենթարկվել են հանգամանալից վերլուծության համակարգչային ծրագրերի միջոցով, որոնց հիման վրա կառուցվել են աղյուսակներ և գծապատկերներ: Ստորև ներկայացնենք դրանցից մի քանիսը:

«Ձեր կարծիքով՝ ինչո՞վ է պայմանավորված ներկայումս բարոյամշակութային արժեքների վերաիմաստավորումը» հարցին ուսանողներն ընտրել են հետևյալ տարբերակները (աղյուսակ 1.).

Աղյուսակ 1.

	Քանակ	**Տոկոս**
Համաշխարհային արժեքների ներգործմամբ	455	27%
Հասարակական և անձնային արժեքների հակասությունների առաջացմամբ իրական կյանքում	388	23%
Սեփական փորձի վերլուծությամբ	524	32%
Ազգային արժեքների նվազմամբ	306	18%
		100%

Կարծում ենք, նման պատասխաններն իրատեսական են, քանի որ բազմաթիվ «նոր արժեքներ» երբեմն հակասեցին ազգային արժեքներին: Ավելին, տեղեկատվական բազմաթիվ աղբյուրներ հանգամանալից լուսաբանեցին ոչ այն ուղղվածությամբ, ինչպես որ հարկն էր: Մինչդեռ աստիճանական, տեղին և ներդաշնակությամբ կիրառությունը կարող էր դրական, հաջողված արդյունքներ տալ, եթե հաշվի առնվեին ազգային առանձնահատկությունները: Դրան նպաստեց նաև տնտեսակարգի փոփոխությունը, երբ սոցիալական, հասարակական «մենք»-ի գիտակցման կարգախոսը փոխարինվեց սպառողական հոգեբանությամբ՝ «ես»-ի ընդգծումով. արդյունքի հասնելու առանց միջոցների և մեխանիզմների մեջ տարբերակում դնելու: Հասարակական արժեքները, որոնք ձևավորվում են տարբեր սոցիալական ինստիտուտների կողմից, երբեմն իրական արտացոլում չունեն կյանքում, լի են խոր հակասություններով:

Արդյունքում ձևավորվում են անձնական արժեքները՝ սեփական փորձի հիման վրա, որոնք վեկտորյալ ուղղվածություն ունեն՝ բավարարել սեփական պահանջմունքները: Այս դեպքում հաշվի չեն առնվում միկրո և մեզոմիջավայրի պահանջները: «Որո՞նք են Ձեր կենսական արժեքները և կողմնորոշումները» հարցին ստացվել են հետևյալ արդյունքները (աղյուսակ 2.).

Աղյուսակ 2.

Կենսական արժեքներ	**Քանակ**	**Տոկոս**
Դաստիարակվածություն և կրթվածություն	619	30%
Անհանդուրժողականություն սեփական և ուրիշների թերությունների նկատմամբ	49	2%

Պարտքի, հավատարմության, երախտագիտության զգացում	99	5%
Ազնվություն, բարություն և անկեղծություն	232	11%
Կոլեկտիվիզմի զգացում	236	11%
Նյութական բարեկեցություն	489	23%
Առողջություն	369	18%

Ինչպես ակնառու երևում է արդյունքներից՝ հիմնարար փոփոխություններ են նկատվել արժեքային համակարգում: Պարզ երևում է, որ ուսանողների շրջանում պարտքի, հավատարմության, երախտագիտության՝ որպես արժեքի, թերագնահատումը լուրջ հիմնախնդիր է: Առանց վերոթվարկյալ արժեքների անձը դառնում է եսակենտրոն շրջապատի նկատմամբ՝ ծնողներ, հարազատներ, շրջապատող մարդիկ: Այս դեպքում տրամաբանորեն հիմնավորված է նաև սեփական սխալների նկատմամբ ցածր պատասխանատվությունն և անտարբերությունը: Փորձենք տալ որոշակի բացատրություն: Կարծում ենք, որ նման պատասխանները պայմանավորված են **1.** Կյանքի նկատմամբ ունեցած անորոշությամբ, աշխատանքային շուկայում մասնագիտական ինքնահիրացման վախով, երջանկության, վաղվա օրվա նկատմամբ հավատի, վստահության զգացողության պակասով: **2.** Ներդաշնակ սոցիալականացման համար հոգևոր արժեքների սահմանափակմամբ, դրա փոխարեն նյութական պահանջմունքների և արժեքների գերագնահատմամբ, որը խանգարում է անգամ «ընտանիք» սոցիալական ինստիտուտ ձևավորելուն (սահմանափակվում է վերարտադրողական գործառույթը), հարազատների միջավայրում անձին առավել «բաց համակարգով» դրսևորելուն: **3.** Սեփական փորձի, դիտարկումների ընթացքում այն տեսակետի ձևավորմամբ, որ բարձր բարոյական արժեքներով մարդիկ հաջողված չեն, բարոյահոգեբանական արժեքների այդպիսի համակարգը խանգարում է բարեկեցիկ ապրել և «վայելել» կյանքը, սահմանափակում է սոցիալական տարբեր շերտերում հաղորդակցման շրջանակները: Կրթական միասնական տարածքը հնարավորություն է տալիս նոր համաշխարհային բարոյամշակութային արժեքների ձևավորման, որոնց հիմքում համամարդկային արժեքային համակարգն է: Հիմնական կարգախոսն է՝ ոչ թե ուժեղի, հարուստի գերակայությունը թույլի, աղքատի նկատմամբ, այլ հումանիզմի, հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի, փոխհամագործակցության, մշակութային փոխհարստացման ձևավորումը: Ակնառու է, որ համաշխարհային մշակութային արժեքների շրջանակներում առավել գերակայողը դարձել են «ամերիկյան արժեքները», որոնք համաշխարհային լեզվի (անգլերեն) ներթափանցմամբ տարածվել են անձի սոցիալականացման բոլոր ինստիտուտներ և ոլորտներ [3]:

Համամարդկային արժեքային համակարգի կարգավորման համար իրավական-կանոնակարգող հիմք են հանդիսանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Համաշխարհային բանկի, Եվրոպական խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների և կառույցների կողմից ներկայացվող միջազգային համաձայնագրերն ու օրենսդրական ակտերը, որոնք ձևավորում և կազմակերպում, կարգավորում են համաշխար-

հային միջազգային կրթական տարածքը: Թվարկված կառույցները փորձում են տարածաշրջաններում ինտեգրացիոն եզրեր գտնել, անհրաժեշտ պայմաններ ստեղծել տարբեր երկրների, ժողովուրդների կրթական, մշակութային և համագործակցության համար:Այս մակարդակում որպես գերակայող, բացարձակ արժեք դիտարկվում են «մարդն» ու «կրթությունը»: Կարևորվում են մարդու իրավունքներն ու ազատությունը: Միջազգային կառույցների կողմից իրականացվող տարբեր գիտական, հետազոտական գործունեության ընթացքում առաջադրվում են տվյալ տարածաշրջանին բնորոշ պայմաններում անձի սոցիալականացման առանձնահատկություններին համապատասխան կանխատեսվող դրույթներ: Այդօրինակ աշխատանքներին ներգրավվում են տվյալ ոլորտների մասնագետներ: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս անվրեպ և ստույգ ախտորոշել, ուսումնասիրել և ներկայացնել ազգային արժեքային համակարգը: Մասնավորապես կրթական բարեփոխումների արդյունքում ախտորոշվում է կրթական համակարգը, առաջադրվում են դասավանդման, ուսումնառության գնահատման կազմակերպման նոր ձևեր ու մեթոդներ, որոնք հնարավոր են մասնագիտական համապատասխան կոմպետենցիաների և մասնագիտական արժեքների հենքի վրա: Հարաբերակցությունը ուղղորդվում է համամարդկային արժեքներից դեպի մասնագիտական արժեքների տեղայնացում: Մասնագիտական շարժունությունն ապահովում է կրթություն ամբողջ կյանքի ընթացքում՝ շարունակական՝ ցկյանս կրթություն, որը նույնպես նպաստում է նոր մասնագիտական արժեքների ձևավորմանն ու պահպանմանը:

Ազգային արժեքների ձևավորման առաջնային կառույցը ընտանիքն է, որտեղ դրանք գերակայում են մյուս արժեքներին: Անձի սոցիալականացման ընթացքում՝ մյուս սոցիալական ինստիտուտներում՝ «կրոն», «մշակույթ», արժեքների հարաբերակցությունը փոխվում է. գերակայում են հոգևոր, համամարդկային, մասնագիտական արժեքները: Այդ գերակայությունը կարող է դրսևորվել փոխլրացմամբ, եթե անձի անհատական հատկանիշները ներդաշնակվում են հասարակության մեջ ընդունելի բարոյամշակութային արժեքների հետ:

Սոցիալական յուրաքանչյուր ինստիտուտ բաց գործուն համակարգ է, որտեղ կենսական, սոցիալական, քաղաքական, բարոյական, կրոնական արժեքների համակարգերը դրսևորվում են երկու մակարդակում՝ ազգային և համամարդկային: Մեր կարծիքով՝ ցանկացած սոցիալական ինստիտուտի գերակա խնդիրն է ազգային արժեքների ներդաշնակումը, հայապահպանման գործընթացների ապահովումը: Իսկ դա հնարավոր է, եթե համապատասխան սոցիալական ինստիտուտում ազգային, մշակութային, բարոյական, ինքնության արժեքները փոխանցվեն միջսերնդային համագործակցությամբ:

Գրականություն

1. **Казлов В. А.** Воспитание как антропологический феномен, М., 2014, с. 8.
2. **Огурцов А.П.** К семье, Родине, человеку, его деятельности, обществу, искусству и культуре, М., 2011, с. 49

3. Постиндустриальный мир и процессы глѐ»обализации. «Мировая экономика и международные отношения», 2008, N3.

ОБЩЕЧЕЛОВЕЧЕСКИХ И НАЦИОНАЛЬНЫХ ЦЕННОСТЕЙ В РАЗЛИЧНЫХ СОЦИАЛЬНЫХ ИНСТИТУТАХ

Саргсян А.А. (Ереванский государственный университет ИФ, Иджеван, Армения)

В статье анализируются моральные и культурные ценности студентов. Армению, как часть мира, коснулись общественные тенденции развития. В статье рассматривается соотношение общечеловеческих и национальных ценностей в различных социальных институтах. Обосновано, что приоритетной задачей любого социального института является сохранение национальных ценностей, гармония общечеловеческих и национальных ценностей, обеспечение сохранения и формирования армянских, национальных черт. Это возможно, если в соответствующем социальном институте национальные, культурные, нравственные, индивидуальные ценности будут переданы в процессе взаимодействия поколений.

Ключевые слова*: ценности, нравственные ценности, общечеловеческие ценности, социальный институт, социальные взаимоотношения, взаимодействие поколений.*

THE RATIO OF HUMAN AND NATIONAL VALUES IN DIFFERENT SOCIAL INSTITUTIONS

Sargsyan A.A. (Yerevan State University IB, Ijevan, Armenia)

The article is analyzes the results of social surveys conducted to study student's moral and cultural value systems. The results factually show that the student's value system has undergone dramatic changes, as a result of multifunctional systems. It is proved that the priority of any social institution is the preservation of national values, the harmony of human and national values, to ensure the conservation and the formation of the Armenian, national characteristics. It is possible if the appropriate social institution of national, cultural, moral and personal values will be transferred to the process of interaction between generations.

Keywords: *values, moral values, universal values, social institution, social relationships, intergenerational interaction.*